

ՎԻԿՏՈՐ ՀԻՒՆՈՅ

ՊԻԻՐԿՐԱՎՆԵՐ



(Նախընթ. տիւս էջ 569, 1906)

Ջարմանք. բայց ոչ, պատուականի սերունդ անբուն և անարգ.
Ոչ, վատ իշխանք, ոչ, դուք անշուշտ հարազատ չէք. նախահարք
Ոչ վատաբար անգութ էին, ոչ խարդախ, ոչ դաւաճան,
Ազնիւ մարդիկ էին և ինձ ազնւաբար դիմացան.
Այն նախահարք, այն լեռնական տիտանանց՝ որ յայտնապէս
Մարտընչելու սովոր էին՝ դաշտն, ընդարձակ ասպարէս
Ուր պահուելու խորշ մը մը չըկայ, անաւոր չէր. ուղղակի
Վերտանգին դէմ կը քալէին և շատ անգամ բանակի
Հնդդիմացան. կամուրջըն թող կտորէր փախչող թըշնամին,
Այն խափան չէր քաջ նախահարք անընդիմակ ընթացին,
Ոստնու և լայն անշըրպետին միւս կողմն անցնիլ խաղ մըն էր
Այն աներկիւղ ազատանին այսպէս ինձ դէմ կը գընէր:
Այն անվըհատ ոստիններուն անհընարին գործ չըկար.
Որչափ ամուր և ըլլար պատն, անբաւական և ուրկար.
Այն քաջազանց ձողապատուար կը թըւէր, ցանկ սեպական.
Փայտ սանդղդով — բեռին հագիւ դիմանալու բաւական —
Անոնք բերդի կը տիրէին որ անառիկ կ'երեւէր.
Վայր հոսանուտ՝ այրող ծրծումբ, հալած կապար կ'անձրեւէր
Անոնց գըլխուն վըրայ և՛ որ աւելին է՝ նոյնժամայն
Ահագնապէս փայտեայ սանդուղըն կը ծըռէր, բայց սակայն
Անոնք անհոգ, անոնք վըստահ և կարծես թէ ապահով,
Այն սանդղդէն յառաջագոյն վեր ելլելու ջանալով՝
Իրարու հետ կը մըրցէին. որչափ անգամ կար մը, կար,
Երբ ելլելու համար պատշաճ ուրիշ միջոց մը չըկար,
Անոնց բաւեց, հանգուցաւոր կար մը ուսկից գիշերանց
Եւս աւելի յանդըգնաբար կը կախուէին, և լերանց
Ահագնաշունչ քամին, որ կարն ըստէպ ըստէպ կ'ուրէր,
Վըհի վըրայ այն մարդկային ողկոյզն ուժգին կ'որորէր —
Եւ այն բարակ չըւանն իրաւ մահու որբոց մ'էր — առանց
Այն կամակոր թըշնամոյն, այն անյուսահատ քաջազանց
Ահարո գործն ընդհատելու: Թէ որ մութուն արշաւել,
Յանկարծական զաղտ յարձակմամբ անպատրաստ վայր մը գրաւել,
Մանրակրկիտ ոմանց թըւէր անճահ և ոչ դըժուարին,
Երբէք լուսն չըխորչելով՝ ամբարտաւան թըշնամին
Կայսրըն ի դաշտ կը հրաւիրէր, հարթ ընդարձակ ասպարէս,
Եւ կանխաւ վայրըն գրաւելով՝ կը բանակէր յայտնապէս,
Սակաւաթիւ բայց աներկիւղ ուստի իրաւ անագին՝
Արիաբար դէմ կը գընէր կայսերական բանակին:
Ահա այսպէս մարտընչեցան այն նախահարք գոր համբաւ
Հին տիտանանց նըմանեցուց, որ ըստացան փառք ամբաւ,
Այսուհանդերձ կալուած բազում, ամբողջ, քաղաք և գաւառ.
Այսպէս ատոնք կոմս և պարոն եղան, ոմանք նախարար,
Գաւառակալ աւագ իշխան և այլ ոմանք թագաւոր:
Անոնք, յաղթեալ կամ յաղթական, ոչ ինչ նըւագ փառաւոր
Եւ պատուական էին. արդ այն մեծ տիտաններն ի՞նչ ծընան.
Գաճաճ և հրէշ, սերունդ անբուն որչափ նախնեաց աննըման,
Դո՛ւք, վատ թողու՛նք որ անվըտանգ խիզախելու սովոր էք,

Անկասկածի դուք որոգայթ լարէք, գաղտուկ փոս փորէք, Գուք, առանց շատ հեռանալու, ուր որ վարուն ճամբայ կայ, Ուր ծառուտ վայր, լեռնահամէջ ձեր անձաւին մերձակայ, Ուր որսալու պատշաճ դարան և թաքըստոց պահնով, Երթաք մութուն հոն դարանիք, աւազակի դանակով Որ ձեր գէնն է, և ըսպատէք կըքած կըքկած, միշտ ահիւ, Թէպէտ դասակ ըսպատագէն տասնպատիկ բազմաթիւ, Որ որսըն գայ անձամբ և ձեր որոգայթին մէջ գերի, Զար որսականք որ ոչ կանանց զըթալ գիտէք, ոչ ծերի Եւ ոչ տըղու, դուք աւարէք, ջարդէք, այրէք անխընայ, Դէն կործանէք մինչեւ որ քար քարի վըրայ չըմընայ, Ապա փախի՛ք ուր ապաստան ունիք, անձաւ գազանի. Ահա ձեր գործն այս է, իրաւ գովասանաց արժանի. Ո՛վ նախահարք, ո՛վ քաջազունք, ահա ձենէ ինչ ծընաւ, Աւազակ չար, մանաւանդ՝ որ աւելին է՝ վատ բընաւ. Թէ որ դուք սիրտ ունենայիք և թէ որ դոյզըն պատիւ, Զեզ կ'ըսէի՝ Գերմանիա, ձեր մայրն հիւանդ է, հազիւ Ընդհատական չունչ մ'ունի որ աստիճանաւ կը սպառի Եւ, կարեւի՛ք, երակին մէջ արիւն մը որ կը սառի. Բայց սակայն դուք, անգութ որդիք, իբրը թէ այս չբաւէր, Գուք իրարու հետ մըրցելով կը խոցէք այն բազմավէր, Այն կիսամահ թըշուառականն, այն անպաշտպան մայր ազնիւ Որ դէպ ի վեր ձրգտած թեւերն ամբառնալով՝ խոր ձայնիւ Ոգեմարի օրէ օր, աւաղ, միշտ եւս աւելի կը նըւազի և այս ժամուս ձայն մ'է հազիւ լրսելի, «Ահ անիծեալ ըլլաք, կ'ըսէ, ո՛վ մայրասպան չար տըղաք»։ Արդ գոչելով ես ձեզ կ'ըսեմ. «Վայ ձեզ, այն ժամն ուր ծընաք Զախող ժամ մ'էր»։ Այո, վայ ձեզ, հին ոխերիմ թըշնամիք, Որ, պատժապարտ դասակ, երկար անպատուհաս մընացիք. Զեր այցելուն, ո՛վ կոշնականք և ո՛վ ուրախ կոշնատէր, Այսուհետեւ ձեր հիւրըն չէ, հիւրն որ ըզձեզ կը խրատէր, Զեր կայսրըն՝ ձեր դատաւորն է, աստուածառաք վրիժառու. Զեր եղբրանց չափըն լըցաւ և գութ չունիք յուսալու. Ես անձամբ անձըս պատժեցի, ուստի, արդար դատաւոր, Կըրնամ դատել, պատուհասել որ և իցէ յանցաւոր։

Ստանկոստայի իշխաններուն խօսելով.
Կայանալիք սահմանակալ իշխանք, դուք ինչ կ'ընէք հոս. Լուգասիան՝ Մորաիան ո՛ր է և ո՛ր է Հոնոս.
Ահա այսպէս մեր դուռը մենք մեր թըշնամունյն կը բանանք, Երբ որ դուք հոս, ձեր գաւառէն հեռու, ուրախ կոշնականք, Կը զուարճանաք, ձայն կը հընչէ, վըրնջիւն մարիտէ ձիերու, Ասպատակող Ատաացին կու գայ, Վի՛նէ չէ հեռու.
Գարձէք, գացէք, մեր սահմանէն դուրս հանեցէք թըշնամին.
Մենք պահանորդ պարըսպին ենք, դուք պահապան խըրամին.
Գացէք, սահմանըն պահեցէք, սահմանակալ նախարարք.
Իւրաքանչիւր կայանային մարզպետ հարիւր հազարմարք,
Իբրեւ տուգանք, կայսերական գանձին պիտի վըճարէ։
Իւրաքանիւ նայելով՝ յետոյ ունոր խօսելով.
Ահա մանուկ, այլ ոչ անմեղ. յոյսափ անարգ և չար է, Լակոտ գայլի, ոչ ինչ նըւազ արիւնախանձ՝ ահաւոր։
Լուրս, իշխան քաղաքակալ, դեռահասակ բըռնաւոր,
Այսուհետեւ քաղաք չունիս որ անխընայ չարարես, Այն ազատ է։

Ճիւղնայարդիմ խօսելով.
Ինչ գործ ունիս հոս դու որ արդ օտար ես.
Բախտախընդիր ճենովացի, վատ չողոքորթ, չար խրատառու, Այլ եւրս հոս կենալու չես. քեզ պէտ չունիք, գընա։
Կարաւոտի խօսելով, Գու.
Որ սուտ երդմամբ համոզելով բարեւոք գիտես կին խաբել.
Գող քաղաքին զոր հաւատաց քեզ կոմսուհին իզապել.
Այր անառակ, դու որ խըստիւ պիտի դատուիս, գընա՛ Պալ.

Ինձ ըստպատէ կայսերական ատենան ըզքեզ, բռնակալ
Եւ երդմագանց, պիտի դատէ և՛ պատժելով չարաշար՝
Պիտի ստիպէ ըզքեզ, իշխան, գաւառակալ նախարար,
Մի պիղծ հրեայ շալակելով, իբրեւ խոնարհ բռնակիր,
Հրապարակաւ ժամ մը կրելու այրն անհաւատ և զագիր:

գիկնուրնկրուն խօսելով,

Արդ, զօրականք, այս վատերուն լուծէն այլ եւս արձակ էք.
Ձեր տէրն ես եմ և ահա՛ ձեզ կը հրամայեմ որ քակէք
Գերիներուն շրջիւն, ասոնք, բաղդատաբար պատուական,
Ձեռանցեցին, ինչո՞ւ կըրեն այն կապն անարգ՝ պատժական.
Այն կապն ասոնց կը պատշաճի, ասոնց զոր նոյն շրջիւնով
Պիտի կապէք:

Կարձենալ իշխաններուն խօսելով,

Անպատուհաս, անձաւի մէջ ապահով,

Դո՛ւք ամենուտ հոս ժողոված, աւագ իշխանք որսական.

Անհոգաբար կը խնդայիք և մըրցելով, կոշնական

Եւ կոշնատէր, նոյնչափ անգութ որպէս նոյնչափ անառակ,

Մի ազնիւ որս կը յօշէիք, իմ ժողովուրդըս, ճարակ

Ձեր անհրկան՝ անյագ քաղցին, — այն քաղց վայրի զագանի

Քան թէ մարդու, — և պատառներն՝ որ տակաւին կենդանի,

Կը դողային, եղբայրաբար կը բաժնէիք. նոյն ժամայն

Ժանտ պատուհասն, որ ընդերկար ըզձեզ խնայեց, բայց սակայն

Որ արթուն էր և կը սպասէր, երկայնամիտ վրիժառու,

Յամբազնաց կը յառաջէր մուծուն՝ առանց ազդ տալու.

Այն վրիժառուն ահա՛ հասաւ, անակրնկալ թըշնամին

Ձեր անմատոյց անձաւին մէջ երեւցաւ՝ ահագին.

Ահա՛ Կեսար վերադարձաւ, ձեր չին խրտուիլըն՝ Կեսար,

Եւ վեհ արծիւն՝ որ ամպի մէջ թեւատարած կը կենար,

Աներևութ ակասատես, խոյանալով ի բարձուստ,

Անգղիներուն չար խըմբին մէջ եկաւ իջաւ յանկարծուստ:

Շարայարեկի

ՏԱԿԱՆԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ 1906ԻՆ

(ընդամուր տկնարկ)

Պարագաները անպէս մը ըրած են՝ որ
թրքահայ գրականութիւնը գրեթէ նախ
Պոլսոյ ու ան ալ՝ լրագիրներու և Տարե-
ցոյցներու մէջ կ'ամփոփուի: 1906ին ինչ
գրական արտադրութիւն ըրաւ Պոլիսը. —
Ինքրան «Ներաշխարհ» մը աշխարհ բե-
րաւ. իսկ Ենովք Արմեն՝ նորալէպերու հա-
ւաքածոյ մը. և 1906ը բաղդաւոր եղաւ,
քանի որ 1905ի չունեցածը ունեցաւ. —
յարգանօք ի բաց առնենք Գ. Մալխասի
կոնքուսներու հոյակապ թարգմանութիւնը:
Մենք չենք ուզեր քննել այս ամու-
թեան պատճառները որոնք արտաքին են.

բայց պէտք է ըսել՝ թէ տաճկահայը այդ
պատճառներէն այնպիսի տպաւորութիւն
մը կը ստանայ որ մի քանի տարի վերջ
տաճկահայ գրականութեան վրայ տեսու-
թիւն մ'ընողը՝ այդ պատճառները ներքին
պիտի համարի:

Տաճկահայը նոր թերթեր հանելու ախտ
ունենալ կարող չէն, բայց ստէպ կը փո-
փոխեն անոնց գոյները, այսպէս Լոյսը որ
Վ. Փափագեանի գրչին տակ զաւեշտա-
թերթ մ'է՛ նոյնը օր մը կրօնաթերթ կ'ըլ-
լայ Բարգէն Վ.ի գրչին հպատակ:

Տաճկահայ գրականութեան կեդրոնը Պո-
լիսն է ըսինք. հոն են տպարանները և
խմբագրատունները: Բարեբաղդաբար ազ-
գը Մամուրեան մը ունեցած է, որուն շնոր-
հիւ իզմիրն ալ Արեւելեան մամուլը կ'ու-
նենայ, միակ շարաթաթերթը՝ որ հիմայ
կ'ապրի Պոլսէն դուրս: Լրագրաց պատ-
մութիւնը մեզի կը ներկայացնէ Կեսարիան